ԳՆԱՌԱՋԱՐԿԻ ՀՐԱՎԵՐ

ՈՉ ԽՈՐՀՐԴԱՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՄԲ

Ծրագրի անվանումը՝	**«ԵՄ-ն հայկական համայնքներում էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի համար»** **«Փոքր մասշտաբի վերականգնվող էներգիայի և էներգիաարդյունավետության միջոցառումներ հանրային շենքերում և պիլոտային մեկուսացում տնային տնտեսությունների մակարդակում»**
Վճարման աղբյուրը՝	**Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ)**
Պայմանագիր No.	**GIZ/ESF/NCS-2024/001**
Ամսաթիվը՝	**15 Մարտի, 2024թ.**

Հարգելի գործընկեր,

1. Հրավիրում ենք ներկայացնելու Ձեր Գնառաջարկը **«Տրանսպորտային ծառայություն»** ոչ խորհրդատվական ծառայությունների (այսուհետ՝ Ծառայությունների) մատուցման նպատակով:

2. Դուք պետք է Գնառաջարկ ներկայացնեք սույն հրավերի ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ բաժնում նշված բոլոր ծառայությունների համար: Գնառաջարկները կգնահատվեն բոլոր ծառայությունների համար և պայմանագիր կկնքվի այն ընկերության հետ, որի առաջարկած՝ գնահատված մեկ կիլոմետրի միավոր գինը կլինի նվազագույնը:

3. Ձեր Գնառաջարկը պետք է ներկայացնել էլեկտրոնային/թղթային ձևով՝ apasoyan@esfarmenia.org; artgrigoryan@yahoo.com Էլ. Փոստ-ի միջոցով կամ Էներգախնայողության աջակցման հիմնադրամ, ք. Երևան 0010, Վ. Սարգսյան 26/1, “Էրեբունի Պլազա” բիզնես կոնտրոն, գրասենյակ 414 հասցեում:

4. Պատվիրատուին Ձեր Գնառաջարկը ներկայացման վերջնաժամկետն է **29 մարտի, 2024թ., ժ. 15:00 (տեղական ժամանակով):** Վերջնաժամկետից ուշ ներկայացված Գնառաջարկները չեն ընդունվում:

5. Ձեր Գնառաջարկը՝ հայերեն լեզվով պետք է ներկայացվի համապատասխան տեխնիկական փաստաթղթերի, կատալոգ(ներ)ի և տպագիր այլ նյութերի ու համապատասխան տեղեկությունների հետ մեկտեղ՝ գնանշված յուրաքանչյուր անվանման համար:

6. Ձեր Գնառաջարկը պետք է ներկայացվի ստորև բերված հրահանգների և կից ներկայացվող Պայմանագրի դրույթների համաձայն: Կցված Ծառայությունների մատուցման ժամկետները և պայմանները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

(i) <u>ԳՆԵՐ</u>- Գները պետք է ներկայացվեն Հայկական Դրամով՝ **մեկ կիլոմետրի միավոր գների** համար, որը ներառում է բոլոր հարկերը՝ ԱԱՀ, մաքսատուրքերը, տուրքերը, ինչպես նաև ծառայությունների մատուցման հետ կապված բոլոր ծախսերը:

(ii) <u>ԳՆԱՆՇՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ-</u> Տեխնիկական մասնագրերին էականորեն համապատասխանող Գնառաջարկները կգնահատվեն մեկ կիլոմետրի միավոր գների համեմատման սկզբունքով:

Գնառաջարկները գնահատելիս Պատվիրատուն յուրաքանչյուր Գնառաջարկի գնահատված գինը կորոշի գնառաջարկի թվաբանական ցանկացած անճշտությունների ուղղումների միջոցով, հետևյալ կերպ.

ա) այնտեղ, որտեղ կա անհամապատասխանություն բառերով և թվերով տրված գումարների միջև, կգերակայի բառերով գրվածը,
բ) այնտեղ, որտեղ կա անհամապատասխանություն միավոր արժեքի և քանակի բազմապատկման արդյունքով ստացված ընդամենի միջև, կգերակայի նշված միավորի արժեքը,
գ) եթե Ծառայություններ մատուցողը հրաժարվի ընդունել ուղղումները, նրա Գնառաջարկը կմերժվի:

(iii) <u>ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՆՈՐՀՈՒՄ-</u> Պայմանագիրը կշնորհվի այն Գնառաջարկ ներկայացնողին, որը կառաջարկի գնահատված նվազագույն գինը և կբավարարի տեխնիկական պահանջներին: Հաղթող ճանաչված Գնառաջարկ ներկայացնողը կստորագրի կից ձևով Պայմանագիրը, ինչպես նաև ծառայությունների մատուցման ժամկետները և պայմանները:

(iv) <u>ԱՌԱՋԱՐԿԻ ՈՒԺԻ ՄԵՋ ԼԻՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏ-</u> Ձեր Գնառաջարկը պետք է ուժի մեջ լինի Գնառաջարկի Հրավերի 4-րդ կետում նշված Գնառաջարկի ներկայացման վերջնաժամկետից հետո քառասունհինգ (45) օր ժամկետով:

7. Լրացուցիչ տեղեկատվություն.
Հայտատուն իրավունք ունի Գնառաջարկների ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ պահանջելու հրավերի վերաբերյալ տեղեկատվություն/պարզաբանում:

8. Ստուգումներ և աուդիտ

8.1 Ծառայություններ մատուցողը պետք է ապահովի Պատվիրատուի բոլոր ցուցումների կատարումը, որոնք կհամապատասխանեն ծառայությունների մատուցման վայրի գործող օրենքներին:

8.2 Ծառայություններ մատուցողը պետք է թույլատրի և ապահովի, որպեսզի վերջինիս Ենթակապալառուները և խորհրդատուները ևս թույլատրեն **ԳՄՀԸ/GIZ**-ին և/կամ **ԳՄՀԸ/GIZ**-ի կողմից նշանակված անձանց ստուգել Պայմանագրի իրականացման և Գնանշման ներկայացման հետ կապված Ծառայություններ մատուցողի գրասենյակները և բոլոր հաշիվները և գրառումները **ԳՄՀԸ/GIZ**-ի կողմից նման պահանջ լինելու դեպքում: Ծառայություններ մատուցողի և վերջինիս Ենթակապալառուների և Խորհրդատուի ուշադրությունը հրավիրվում է Պայմանագրի Կետ 6-ին՝ Խարդախության և կոռուպցիայի մասին, որը, ի լրումն այլ բաների, տրամադրում է այն գործողությունները, որոնք նպատակ ունեն սկզբունքորեն խոչընդոտելու **ԳՄՀԸ/GIZ**-ի ստուգման և աուդիտի իրավունքների իրականացմանը և որոնք փոխարինում են արգելված միջոցառման, որը հանգեցնում է պայմանագրի դադարեցման (ինչպես նաև **ԳՄՀԸ/GIZ**-ի գերակայող կանխարգելիչ ընթացակարգերի համաձայն՝ անհամապատասխանության որոշելուն):

Հարգանքով՝
Աստղինե Պասոյան, Գործադիր տնօրեն
Էներգախնայողության աջակցման հիմնադրամի

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՁԵՎԸ **GIZ/ESF/NCS-2024/001**

ՈՉ-ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՅՈՒՄ

ք.Երևան **«…» …… 2024թ.**

Սույն Պայմանագիրը՝ թիվ **GIZ/ESF/NCS-2024/001**, կնքվել է 2024թ. ……ին «**Էներգախնայողության աջակցման հիմնադրամ**» -ի, ի դեմս տնօրեն Ա. Պասոյանի (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «……» -ի, ի դեմս տնօրեն …… (այսուհետ՝ Ծառայություններ մատուցող) միջև մյուս կողմից**:**

Քանի որ Պատվիրատուն հրավիրել է ներկայացնել Գնառաջարկ **«Տրանսպորտային ծառայության մատուցում»** ոչ խորհրդատվական ծառայությունների իրականացման համար (այսուհետ՝ Ծառայություն), և ընդունել է Պայմանագրի շրջանակներում այդ ծառայությունների մատուցման համար Ծառայություններ մատուցողի առաջարկը՝ ***Համաձայն Հավելված 1-ի,*** ուստի Այսուհետ սույն Պայմանագիրը վկայում է հետևյալի մասին.

1. Ստորև նշվող փաստաթղթերը համարվում և ընթերցվում են, իբրև սույն Պայմանագրի անբաժանելի մասերը.
ա) Ծառայություններ մատուցողի Գնառաջարկը՝ ծառայությունների մատուցման պայմանները, տեխնիկական պահանջները;
բ) Հավելված 1;
գ) Լրացումներ (եթե կիրառելի են):

2. Հաշվի առնելով վճարումները, որոնք ստորև նշված ձևով կիրականացվեն Պատվիրատուի կողմից Ծառայություններ մատուցողին, Ծառայություններ մատուցողը Պատվիրատուի հետ կնքում է սույն Պայմանագիրը, համաձայն որի պետք է սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան իրականացնի Ծառայությունների մատուցումն ու վերացնի ցանկացած թերությունները:

3. Սույնով Պատվիրատուն պարտավորվում է կատարել ծառայությունների մատուցման և վերացրած թերությունների հետ կապված վճարումները՝ համաձայն Հավելված 1-ի, սույն Պայմանագրով սահմանված վճարման պայմանների համաձայն: Ծառայությունները մատուցվում են ըստ Պատվիրատուի պահանջի (պահանջը կարող է լինել էլեկտրոնային, գրավոր կամ բանավոր): Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Ծառայություններ մատուցողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալուց հետո եռօրյա ժամկետում Ծառայություններ մատուցողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 1 (մեկ) օրինակը կամ Ծառայությունը չունդունելու պատճառաբանված մերժումը: Նշված ժամկետում Հանձնման-ընդունման արձանագրությունը չստորագրելու և գրավոր առարկություններ չներկայացնելու դեպքում այն համարվում է Ծառայություններ մատուցողի կողմից պատշաճ կատարված և Պատվիրատուի կողմից ընդունված:

4. Վճարումներն իրականացվում են միայն Պատվիրատուի պահանջով մատուցված ծառայությունների դիմաց: Մատուցված ծառայությունների դիմաց վճարումը պետք է կատարվի հայկական դրամով՝ ներկայացվող հարկային հաշվի կամ հարկային վավերագրի 100 տոկոսի չափով: Պատվիրատուն պարտավորվում է մատուցված ծառայությունների դիմաց Ծառայություններ մատուցողին վճարել հարկային հաշիվը դուրս գրելուց 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Սույն Պայմանագրի ընդհանուր արժեքը ձևավորվում է Պատվիրատուի և Ծառայություններ մատուցողի կողմից հաստատված պատվերների արժեքների հանրագումարից:

5. Դադարեցում

5.1 Դադարեցում պայմանների չկատարման համար

(ա) Պատվիրատուն, Ծառայություններ մատուցողին ուղարկվող՝ պարտավորությունների չկատարման վերաբերյալ գրավոր ծանուցումով, կարող է ամբողջությամբ կամ մասնակի խզել պայմանագիրը՝ պահպանելով իր իրավունքը՝ պայմանագրի չկատարման հիմքով դիմելու որևէ այլ պաշտպանության միջոցի, եթե.
(i) Ծառայություններ մատուցողը չի կարողանում մատուցել որևէ կամ բոլոր Ծառայությունները Պայմանագրում նախանշված ժամկետում կամ տրամադրված երկարաձգված ժամկետում:
(ii) Եթե Ծառայություններ մատուցողը չի կարողանում կատարել Պայմանագրի շրջանակներում նախանշված ցանկացած պարտավորություն, կամ
(iii) Եթե Ծառայություններ մատուցողը, Պայմանագրի համար մրցելիս ներգրավվել է խարդախության կամ կոռուպցիայի մեջ՝ համաձայն ստորև ներկայացվող Կետ 6-ի՝ ինչի վերաբերյալ Պատվիրատուն ունի հիմնավոր ապացույցներ:
(բ) Այն դեպքում, երբ Պատվիրատուն ամբողջությամբ կամ մասամբ դադարեցնում է Պայմանագիրը, իր կողմից հարմար դիտարկվող պայմաններով և ձևով Պատվիրատուն կարող է գնել Ծառայություններ, որոնք նման են չմատուցված կամ չտրամադրված ծառայություններին, իսկ Ծառայություններ մատուցողը պետք է պատասխանատու լինի Պատվիրատուի հանդեպ համանման Ծառայությունների նպատակով ցանկացած լրացուցիչ ծախսերի համար: Այնուամենայնիվ, Ծառայություններ մատուցողը պետք է շարունակի Պայմանագրի Կատարումը այնքանով, որքանով այն դադարեցված չէ:

5.2 Անվճարունակության համար դադարեցում

(ա) Պատվիրատուն կարող է ցանկացած ժամանակ դադարացնել Պայմանագիրը՝ այդ մասին ծանուցելով Ծառայություններ մատուցողին, եթե Ծառայություններ մատուցողը սնանկ կամ անվճարունակ է ճանաչվում: Նման դեպքում դադարեցումը կլինի առանց Ծառայություններ մատուցողին փոխհատուցման, այն դեպքում, եթե նման դադարեցումը կանխակալ կարծիք չի ստեղծի կամ ազդի հայցի ներկայացման իրավունքի կամ իրավունքի պաշտպանության միջոցի վրա կամ կստացվի Պատվիրատուի կողմից:

5.3 Դադարեցում հարմարության համար

(ա) Պատվիրատուն, Ծառայություններ մատուցողին ուղարկված ծանուցման միջոցով, կարող է դադարեցնել Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասամբ իր հարմարության համար ցանակացած ժամանակ: Դադարեցման մասին ծանուցմամբ պետք է սահմանվի, որ դադարեցումը Պատվիրատուի հարմարության համար է, Պայմանագրի շրջանակներում Ծառայություններ մատուցողի կատարողականի դադարեցման չափը, ինչպես նաև օրը, երբ դադարեցումն ուժի մեջ է մտնում:
(բ) Ամբողջական Ծառայությունները, որոնք պատրաստ են մատուցման համար Ծառայություններ մատուցողի կողմից դադարեցման մասին ծանուցումը ստանալուց հետո 28 (քսանութ) օրվա ընթացքում, կընդունվեն Պատվիրատուի կողմից Պայմանագրի պայմաններով և գներով: Մնացած ծառայությունների համար Պատվիրատուն կարող է ընտրել.
(i) ընդունել Ծառայությունների որոշակի մաս՝ ավարտված և մատուցված սույն Պայմանագրի պայմանների ու գների համաձայն
(ii) չընդունել Ծառայությունների մնացած մասը և վճարել Ծառայությունները մատուցողին երկկողմ համաձայնեցված գումար՝ մասամբ ավարտված Ծառայությունների և Ծառայությունները մատուցողի կողմից նախապես ձեռքբերված նյութերի ու պահեստամասերի համար:

6. Խարդախություն և կոռուպցիա

Եթե Պատվիրատուն ունի հիմնավոր ապացույց, որ Ծառայություններ մատուցողը և/կամ վերջինիս աշխատակիցներից որևիցէ մեկը, կամ վերջինիս գործակալները կամ Ենթակապալառուները, խորհրդատուները, ծառայություն մատուցողները և/կամ վերջիններիս աշխատակիցները Պայմանագրի իրականացման համար մրցելիս ներգրավվել են կոռուպցիոն, խարդախ, գաղտնի համաձայնությամբ պայմանավորված, հարկադրական կամ խոչընդոտող միջոցառումներում (ինչպես սահմանվում է **ԳՄՀԸ/GIZ**-ի գերակայող կանխարգելիչ միջոցառումներում), ապա

Պատվիրատուն կարող է Ծառայություններ մատուցողին կատարված 14-օրյա ծանուցմամբ դադարեցնել Ծառայություններ մատուցողի վարձումը Պայմանագրի շրջանակներում և չեղյալ հայտարարել Պայմանագիրը, իսկ նախորդ Կետ 5-ը պետք է կիրառվի այն դեպքում, եթե նման բացառումն իրականացվել է ենթակետ 5.1-ի շրջանակներում:

7. Ստուգումներ և աուդիտ

7.1 Ծառայություններ մատուցողը պետք է իրականացնի Պատվիրատուի բոլոր ցուցումներ, որոնք չեն հակասում ծառայությունների մատուցման վայրում կիրառվող օրենսդրական դաշտին: Ծառայություններ մատուցողը պետք է թույլատրի և պետք է այնպես անի, որպեսզի վերջինիս Ենթակապալառուները և խորհրդատուները թույլատրեն **ԳՄՀԸ/GIZ**-ին և/կամ **ԳՄՀԸ/GIZ**-ի կողմից նշանակված անձանց ստուգել Պայմանագրի իրականացման և Գնանշման ներկայացման հետ կապված Ծառայություններ մատուցողի գրասենյակները և բոլոր հաշիվները և գրառումները **ԳՄՀԸ/GIZ**-ի կողմից նման պահանջ լինելու դեպքում: Ծառայություններ մատուցողի և վերջինիս Ենթակապալառուների և Խորհրդատուի ուշադրությունը հրավիրվում է Կետ 6-ին՝ Պայմանագրի՝ Խարդախության և կոռուպցիայի մասին, որը ի լրումն այլ բաների, տրամադրում է այն գործողությունները, որոնք նպատակ ունեն սկզբունքորեն խոչընդոտելու **ԳՄՀԸ/GIZ**-ի ստուգման և աուդիտի իրավունքների իրանացմանը և որոնք փոխարինում են արգելված միջոցառման, որը հանգեցնում է պայմանագրի դադարեցման (ինչպես նաև **ԳՄՀԸ/GIZ**-ի գերակայող կանխարգելիչ ընթացակարգերի համաձայն՝ անհամապատասխանության որոշելուն):

Պատվիտատուի կողմից **Էներգախնայողության աջակցման հիմնադրամ**	**Ծառայություններ մատուցողի կողմից** «»
ՀՎՀՀ 00081855 Հեռ: + 374 93 61 16 19 ՀՀ, ք. Երևան, Էրեբունի Պլազա, գր. 414 Էլ.փոստ: apasoyan@esfarmenia.org ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ, Հ/h 2051722064301001	ՀՀ, ք. Երևան, փող. ՀՎՀՀ Հեռ: + (374 10) Էլ. Փոստ՝ Բանկ, h/h
---	_____
Աստղինե Պասոյան Գործադիր տնօրեն	յան տնօրեն

ԳՆԱՌԱՋԱՐԿԻ ՁԵՎ

Ամսաթիվ

Էներգախնայողության աջակցման հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Էրեբունի Պլազա, գր. 414

Մենք առաջարկում ենք իրականացնել **«Տրանսպորտային ծառայության մատուցում»** ոչ խորհրդատվական ծառայությունների (այսուհետ՝ Ծառայությունների) մատուցման թիվ **GIZ/ESF/NCS-2024/001** պայմանագիրը, համաձայն սույն Գնանշման Հրավերին կցված պայմանագրի պայմաններին ---------- (*գումարը՝ բառերով և թվերով*) մեկ կիլոմետրի միավոր գնով՝ ներառյալ բոլոր հարկերը: Մենք առաջարկում ենք ավարտել Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2024թ-ի հոկտեմբերի 31-ը:
Սույն Գնառաջարկը և Ձեր գրավոր ընդունումը կհանդիսանա մեր միջև պարտադիր ուժ ունեցող Պայմանագիր: Մենք հասկանում ենք, որ Դուք պարտավոր չեք ընդունել ամենացածր գին ունեցող կամ Ձեր կողմից ստացված որևէ այլ Գնառաջարկ:

Սույնով մենք հաստատում ենք, որ սույն Գնառաջարկը համապատասխանում է Գնանշման Հրավերի փաստաթղթերի առաջարկի վավերության պահանջներին:

Լիազորված ստորագրություն

Ստորագրողի անունը և պաշտոնը

Ծառայություններ մատուցողի անվանումը

Հասցեն

Հեռախոսի համարը

Էլ. փոստ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ծրագրի անվանում՝ «Փոքր մասշտաբի վերականգնվող էներգիայի և էներգիաարդյունավետության միջոցառումներ հանրային շենքերում և պիլոտային մեկուսացում տնային տնտեսությունների մակարդակում» դրամաշնորհային ծրագիր
Պատվիրատու՝ Էներգախնայողության աջակցման հիմնադրամ
Պայմանագիր No. GIZ/ESF/NCS-2024/001

1. Ծառայությունների Գնացուցակ՝

Ծառայության անվանումը	1 կմ-ի միավոր գինը (առանց հարկերի) (ՀՀ դրամ)	ԱԱՀ**	1 կմ-ի միավոր գինը (ներառյալ հարկերը) (ՀՀ դրամ)	Մատուցման վայրը/հասցեն	Մատուցման ժամկետը
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
Տրանսպորտային ծառայության մատուցում՝ համաձայն Հավելված 1-ի:				*ՀՀ Լոռու մարզի համայնքներ*	*Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2024թ-ի հոկտեմբերի 31-ը:*
Տրանսպորտային ծառայության մատուցում՝ համաձայն Հավելված 1-ի:				*ՀՀ Տավուշի մարզի համայնքներ*	*Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2024թ-ի հոկտեմբերի 31-ը:*
Տրանսպորտային ծառայության մատուցում՝ համաձայն Հավելված 1-ի:				*ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներ*	*Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2024թ-ի հոկտեմբերի 31-ը:*

***եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվիալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 3-րդ սյունակում:*

2. **<u>ՖԻՔՍՎԱԾ ԳԻՆ՝</u>** Վերը նշված գներն անփոփոխ են ու ֆիքսված և սույն Պայմանագրի գործողության ընթացքում փոփոխման ենթակա չեն:

3. Պատվիրատուին իրավունք է վերապահված վերջնական պայմանագրի պատրաստման ժամանակ մինչև ….. չափով ավելացնել կամ պակասեցնել ծառայությունների նախնական քանակները՝ առանց միավորի գնի, ինչպես նաև այլ պայմանների փոփոխության: **Չ/Կ**

4. **<u>ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝</u>** Ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2024թ-ի հոկտեմբերի 31-ը:

5. **<u>ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝</u> ԱՊՊԱ և երրորդ կողմի ապահովագրություն:**

6. **<u>ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ՝</u>** Սույն Պայմանագիրը պետք է մեկնաբանվի համաձայն Պատվիրատուի երկրի օրենսդրության:

7. **<u>ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ՝</u>** Պատվիրատուն և Ծառայություններ մատուցողը պետք է ձեռնարկեն բոլոր ջանքերը, որպեսզի ուղղակի, ոչ պաշտոնական բանակցությունների միջոցով բարեկամաբար լուծեն իրենց միջև սույն Պայմանագրի շրջանակներում առաջացած ցանկացած տարաձայնություն կամ վեճ: Պատվիրատուի և Ծառայություններ մատուցողի միջև առաջացած, չլուծված վեճի դեպքում այն ենթակա է լուծման Պատվիրատուի երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.**<u>ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ՝</u>** Ծառայությունները մատուցողը պետք է էլեկտրոնային/թղթային հասցեով ուղարկի այդ փաստաթղթերը Պատվիրատուին.

ա. Ծառայությունների մատուցողի հաշիվ-ապրանքագիրը՝ նշելով ծառայությունների նկարագրությունը, քանակը, միավորի արժեքը և ընդհանուր արժեքը:
բ. Հավաստող փաստաթղթեր (օր.՝ պայմանագրեր/ հանձման-ընդունման ակտեր/ և այլն)

9. **<u>ԵՐԱՇԽԻՔ Չ/Կ;</u>**
10. **<u>ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՆՇԱԳՐՄԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ Չ/Կ</u>**

11. **<u>ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>** Բոլոր թերությունները պետք է վերացվեն Ծառայություններ մատուցողի կողմից Պատվիրատուի ծանուցումից հետո երեք /3/ օրվա ընթացքում՝ առանց Պատվիրատուի կողմից լրացուցիչ վճարման:

12. **<u>ՖՈՐՍ ՄԱԺՈՐ</u>** Ծառայություններ մատուցողի նկատմամբ տույժեր չեն կիրառվի և պայմանագիրը չի դադարեցվի այն դեպքում, եթե ծառայությունների մատուցման ուշացումը կամ պարտականությունների կատարման հետ կապված ձախողումը արդյունք է հանդիսանում ֆորսմաժորային իրադարձության: Այս կետի շրջանակում «Ֆորս Մաժոր» նշանակում է. Ծառայություններ մատուցողի հսկողությունից դուրս գտնվող իրադարձություն, որը չի ներառում Ծառայություններ մատուցողի սխալը կամ անփութությունը, և որը կանխատեսելի չէ: Այդպիսի իրադարձությունները կարող են ընդգրել, սակայն չսահմանափակվել Պատվիրատուի ինքնիրավ գործողություններով, պատերազմներով կամ հեղափոխություններով, հրդեհներով, հեղեղումներով, համաճարակներով, կարանտինային սահմանափակումներով և էմբարգոներով: «Ֆորս Մաժոր»-ի դեպքում, Ծառայություններ մատուցողը պետք է անհապաղ գրավոր ծանուցի Պատվիրատուին նման իրավիճակի և դրա պատճառների մասին: Եթե Պատվիրատուից այլ գրավոր հրահանգ չի ստացվում, Ծառայություններ մատուցողը պետք է շարունակի սույն Պայմանագրի շրջանակներում իր պարտականությունների կատարումը հնարավորության սահմաններում, և պետք է աշխատի գտնել «Ֆորս Մաժոր» իրադարձությամբ չկանխարգելվող՝ աշխատանքի համար բոլոր իրագործելի այլընտրանքային տարբերակները:

13. **<u>ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳՐԵՐ</u>**

(i) Ընդհանուր նկարագրություն՝

Ուղղություններ – ՀՀ 3 մարզերի (Տավուշ, Լոռի, Գեղարքունիք) համայնքներ և մարզկենտրոններ;
Ընդհանուր ուղերթների մոտավոր քանակը - 90 ուղևորություն, որոնք պետք է իրականացվեն 2024 թվականի մարտից մինչև 2024 թվականի հոկտեմբերը: Այս թիվը միայն տեղեկատվական է և Պայմանագրի իրականացման ընթացքում այն կարող է աճել կամ նվազել կախված ծրագրի իրականացման կարիքներից;

Միջին ամսական ուղևորությունների քանակը - մինչև 8;

Ուղևորների քանակը 1 ուղևորության համար - մինչև 3;

(ii) Առանձնահատուկ մանրամասներ ստանդարտներ

Ծառայություններ մատուցողները պետք է ապահովեն հետևյալ պահանջների պահպանումը տրանսպորտային ծառայություններ մատուցելիս.
1. Սույն ծառայությունը պետք է մատուցվի տեխնիկապես հուսալի, շահագործման համար պիտանի մարդատար ավտոմեքենայով / միկրոավտոբուսով, նաև որակավորված վարորդ(ներ)ով: Ավտոմեքենայի համար որպես նվազագույն արտադրման տարեթիվ է սահմանվում 2015թ.-ը և պետք է անցած լինեն տարեկան տեխնիկական զննում:
2. Տրանսպորտային ծառայությունները պետք է մատուցվեն համաձայն 3 երթուղիների ժամանակացույցի: Անհրաժեշտության դեպքում, Պատվիրատուի պահանջով, Ծառայություններ մատուցողը 2 ժամվա ընթացքում պետք է ապահովի լրացուցիչ ուղերթներ կամ մեկ նմանատիպ, համարժեք տրանսպորտային միջոց, որի համար վճարումը կիրականացվի միևնույն պայմաններով:
3. Տեխնիկական առաջարկի մաս հանդիսացող ներկայացված փաստաթղթերը պետք է բավարարեն ՀՀ տարածքում հանրային փոխադրամիջոցով ուևորների փոխադրման իրականացման պահանջները: Մասնակիցները պետք է ներկայացնեն առնվազն հետևյալ փաստաթղթերի պատճենները՝
- Տրանսպորտային միջոց(ներ)ի տարեկան տեխնիկական զննման վկայական,
- Տրանսպորտային միջոց(ներ)ի և վարորդ(ներ)ի ապահովագրական պոլիսները,
- Տրանսպորտային միջոց(ներ)ի շահագործման պիտանի լինելու վերաբերյալ հայտարարագիր,
- Գրանցված լինել որպես ընկերություն (պետք է ներկայացնել Պետական ռեգիստրի պատճենը),
- Հանրային փոխադրամիջոցների ծառայությունների իրականացման համար արտոնագիր, որը վավեր է առնվազն մինչև 31.12.2024թ.,
- Փոխարինման անհրաժեշտության դեպքում պահեստային տրանսպորտային միջոց(ներ)ի առկայություն,
- Տրանսպորտային միջոց(ներ)ի հիգիենիկ գնահատման և հանրային փոխադրամիջոցին համապատասխանության վկայական,
- Տրանսպորտային միջոց(ներ)ի նշանակված վարորդ(ներ)ի առողջական վիճակի վերաբերյալ բժշկական վկայական,
- Տրանսպորտային միջոց(ներ)ի տեխնիկական վիճակի ամենօրյա զննման ընթացակարգ,
- Վարորդների թմրանյութերի կամ ալկոհոլի ազդեցության տակ չգտնվելը երաշխավորող ընթացակարգ,
- Տրանսպորտային միջոց(ներ)ի տեխնիկական զննման և տեխսպասարկման իրականացման համար բավարար ռեսուրսների և աշխատակազմի վերաբերյալ հայտարարագիր,
- Նմանատիպ ծավալով իրականացված առվազն 1 պայմանագիր,

- Բոլոր վարորդները պետք է ունենան գործող վարորդական վկայական համապատասխան տրանսպորտային միջոցների դասի համար, ինչպես սահմանված է գործող ազգային օրենսդրությամբ.

Տրանսպորտային ծառայությունների մատուցման համար առաջարկվող տրանսպորտային միջոցները պետք է լինեն՝
- գրանցված, ստանդարտ, արտադրված նվազագույնը 2015թ.-ին , ներսից ու դրսից միշտ պահպանվեն հիգիենիկ վիճակում,
- նախատեսված վառելիքից բացի այլ վառելիք օգտագործելու նպատակով չի թույլատրվում տրանսպորտային միջոց(ներ)ի վրա կատարել որևէ փոփոխություն,
- օգտագործվող տրանսպորտային միջոց(ներ)ը պետք է ապահովված լինեն ստանդարտ տեսակի կրակմարիչներով՝ փորձարկման վավեր վկայականներով,
- տրանսպորտային միջոց(ներ)ը պետք է ապահովված լինեն առնվազն 90% որակի մակարդակ ունեցող սեզոնային համապատասխան անվադողերով,
- տրանսպորտային միջոց(ներ)ը պետք է ապահովված լինեն անվտանգության բարձիկներով, օդորակիչով, ամրագոտիներով և արգելակման ABS համակարգով,

Ծառայություններ մատուցողը հետևյալ պահանջներն ապահովելու համար կրում է պատասխանատվություն՝
- փոխադրման ընթացքում վարորդը պարտավոր է հետևել ճանապարհային բոլոր նշաններին և սահմանափակումներին, հաշվի առնել ճանապարհային պայմանները՝ ճանապարհատրանսպորտային պատահարների կանխման նպատակով,
- ծառայությունների մատուցման համար օգտագործել միայն լավ պահպանված, տեխնիկապես հուսալի և շահագործման համար պիտանի տրանսպորտային միջոցներ,
- անսարքության դեպքում օգտագործվող տրանսպորտային միոց(ներ)ը անմիջապես փոխարինել մեկ ուրիշով, որը կհամապատասխանի առաջադրված պահանջներին,
- մեքենան պետք է լինի կահավորված սրահի օդորակիչով և մեքենայում պետք է պահպանվի նվազագույնը +16 աստիճան ջերմություն ձմռանը և առավելագույնը +24 աստիճան ջերմություն ամռանը,
- փոխադրման ընթացքում վարորդին կամ ուղևորներին չի թույլատրվում տրանսպորտային միջոցի ներսում ծխել,
- Վարորդն իր պարտականությունները պետք է կատարի լիովին գիտակից վիճակում՝ ալկոհոլի կամ այլ նյութերի ազդեցությունից զերծ,
- Վարորդը պետք է ունենա ավտոմեքենա վարելու նվազագույնը 3 տարվա փորձ,
- Կապալառուն տարեկան մեկ անգամ Պատվիրատուին պետք է ներկայացնի իր տրանսպորտային միջոց(ներ)ը վարող վարորդի բուժզննման վերաբերյալ բժշկական հետևյալ փաստաթուղթը՝ Ձև 086/ու,
- Որպես նվազագույն մեքենայի յուրաքանչյուր նստատեղ պետք է ունենա ապահովագրություն ուղևորների համար՝ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների,
- ավտոմեքենան պետք է անցնի կանոնավոր, արձանագրված ստուգումներ սպասարկում, անվադողերն ու մնացած պահեստամասերը պետք է լինեն համապատասխան տեսակի՝ համաձայն սեզոնային պայմաններին,
- փոխադրման ընթացքում տրանսպորտային միջոցում պետք է լինեն միայն Պատվիրատուի աշխատակից հանդիսացող ուևորները,
- համաճարակային պայմաններում պետք է ապահովել Պատվիրատուի կողմից պահանջվող հակահամաճարակային միջոցառումները:
- Բոլոր վարորդները պետք է տեղյակ լինեն և պահպանեն մասնագիտական էթիկան հաճախորդների հետ հարաբերություններում:

Ծառայություններ մատուցողը հաստատում է համապատասխանությունը վերոնշյալ բոլոր մասնագրերին (Շեղումների դեպքում Ծառայություններ մատուցողը պետք է նշի դրանք ստորև):

Ծառայություններ մատուցողի անունը

Լիազորված անձի ստորագրությունը

Ամսաթիվը

<u>Հավելված 1</u>
Ծառայությունների Գնացուցակ

«Տրանսպորտային ծառայության մատուցում»
Պայմանագիր No. GIZ/ESF/NCS-2024/001

ՀՀ դրամ

Ծառայության անվանումը	1 կմ-ի միավոր գինը (առանց հարկերի)	ԱԱՀ	1 կմ-ի միավոր գինը (ներառյալ հարկերը)
1	*2*	*3*	*4*
Տրանսպորտային ծառայության մատուցում՝ ՀՀ Լոռու մարզի համայնքներ, /մինչև 2024թ-ի հոկտեմբերի 31-ը/			
Տրանսպորտային ծառայության մատուցում՝ ՀՀ Տավուշի մարզի համայնքներ, /մինչև 2024թ-ի հոկտեմբերի 31-ը/			
Տրանսպորտային ծառայության մատուցում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներ, /մինչև 2024թ-ի հոկտեմբերի 31-ը/			

Ծառայություններ մատուցող՝

Լիազորված ստորագրություն

Ստորագրողի անունը և պաշտոնը

Ծառայություններ մատուցողի անվանումը